# ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

*«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն* ***Լիլիթ Պետրոսյան***

*«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի իրավաբան-փորձագետ* ***Հակոբ Չոլաքյան***



Հետազոտության շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման կառուցակարգի ուսումնասիրություն, ինչպես նաև դրա վերաբերյալ դատական գործերի մշտադիտարկում, որի միջոցով վեր են հանվել վերջին հինգ տարիներին դատական պրակտիկայում առկա զարգացումներն ու խնդիրները։

## 1. Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն.

Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման կառուցակարգի առնչությամբ դատական պրակտիկան վերլուծելու և առկա խնդիրները վեր հանելու համար անհրաժեշտ է նախևառաջ ուսումնասիրել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմքերի և կարգի վերաբերյալ միջազգային փորձը:

Արբիտրաժային վճիռների միջազգային ճանաչումը և կատարումը երաշխավորող կարևորագույն իրավական փաստաթղթերից է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիան (**այսուհետ՝ Կոնվենցիա**)[1], որը նախատեսում է արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մերժման սպառիչ հիմքերը: Կոնվենցիայի նպատակն է խթանել միջազգային առևտուրը և արբիտրաժի միջոցով լուծում տալ միջազգային առևտրային վեճերին՝ նպաստելով միջազգային արբիտրաժային վճիռների ճանաչմանն ու կատարմանը, ինչպես նաև արբիտրաժային համաձայնությունների կատարմանը: Այդ նպատակից ելնելով՝ դատարանները Կոնվենցիան մեկնաբանելիս պետք է որդեգրեն կատարմանը միտված տրամադրվածություն (*pro-enforcement bias*), որն էլ ենթադրում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված հիմքերը պետք է հնարավորինս «նեղ» մեկնաբանվեն, իսկ կատարման մերժումը պետք է հաստատվի միայն լուրջ դեպքերում[2]: Այսինքն, Կոնվենցիայի մեկնաբանություններից բխում է, որ դատարանները իրավասու չեն ըստ էության վերանայել արբիտրաժային վճիռները, նույնիսկ այն դեպքում, երբ իրենց կարծիքով արբիտրաժային վճռով սխալ են հաստատվել փաստերը կամ սխալ են կիրառվել օրենքները:

«ՅՈՒՆՍԻՏՐԱԼ»-ի միջազգային առևտրային արբիտրաժի մասին մոդելային օրենքով (**այսուհետ՝ Մոդելային օրենք**)[3], ի լրումն արբիտրաժային վճիռների ճանաչումն ու կատարումը մերժելու հիմքերի՝ նախատեսվեցին արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմքերը:

Անդրադառնալով Մոդելային օրենքով սահմանված արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման հիմքերին՝ պետք է արձանագրել, որ Մոդելային օրենքի 34-րդ հոդվածով սահմանվում են արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման սպառիչ հիմքեր, որոնք լայն հայեցողություն չեն տալիս ներպետական ատյաններին ըստ էության գնահատելու արբիտրաժային տրիբունալի պատճառաբանությունները[4]:

---

[1] Տե՛ս United Nations Convention on the Recognition and Enforcement of Foreign Arbitral Awards, 1958: Կոնվենցիային անդամակցում է 172 երկիր:

[2] Տե՛ս Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, Նյու Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց, ձեռնարկ դատավորների համար, երկրորդ խմբագրություն, հրապարակված է Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի կողմից, 2024թ., էջեր 23, 136:

[3] Տե՛ս UN General Assembly Resolution 40/72, Model Law on International Commercial Arbitration of the United Nations Commission on International Trade Law, 112th plenary meeting, 11 December 1985; UNCITRAL Model Law on International Commercial Arbitration, 1985, with amendments as adopted in 2006: Մի շարք երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի արբիտրաժային օրենքները հիմված են Մոդելային օրենքի վրա:

[4] Տե՛ս Gary B. Born, International Commercial Arbitration, Third Edition, Volume III, 2021, էջ 3646:

## 2. Արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմքերը.

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 34-րդ հոդվածով սահմանված են արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու երկու խումբ հիմքեր, որոնք նույնանում են Մոդելային օրենքի 34-րդ հոդվածով սահմանված հիմքերի հետ։

Առաջին խումբ հիմքերը սահմանված են Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, որոնք հիմնականում վերաբերում են արբիտրաժային համաձայնության անվավերությանը, պատշաճ ծանուցման բացակայությանը, արբիտրաժային տրիբունալի կողմից լիազորությունների սահմանազանցմանը և օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ընթացակարգերի խախտմանը։ Այս հիմքերի առկայությունը պետք է վկայակոչի և հիմնավորի դիմումատուն։

Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու երկրորդ խումբ հիմքերը սահմանվում են նույն մասի 2-րդ կետով, որոնք վերաբերում են այնպիսի լուրջ խախտումների, որոնց առկայության պայմաններում արբիտրաժային վճիռը գոյություն ունենալ չի կարող։ Հատկանշական է, որ այս պարագայում դատարանը, պարզելով այս երկու հիմքերից մեկի առկայությունը, պետք է չեղյալ ճանաչի արբիտրաժային վճիռը, հետևաբար, դիմումատուի կողմից այս հիմքերի վկայակոչումը կամ հիմնավորումը անհրաժեշտ չէ։

Հարկ է ընդգծել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, անդրադառնալով Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված հիմքերի մեկնաբանմանը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«(...) Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը սահմանափակ են ու սպառիչ և սահմանված են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում, ընդ որում՝ վճիռների վիճարկումն իրականացվում է չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում հարուցելու ճանապարհով: Հատկանշական է, որ վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը համահունչ է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված արգելքի հետ, որի համաձայն՝ արգելվում է որևէ դատական միջամտություն Արբիտրաժային օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ՝ Արբիտրաժային օրենքով նախատեսված դեպքերի: Այս դրույթն ընդգծում է արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը։»*[5]։ Այս որոշմամբ դատարանի արտահայտած դիրքորոշումը հստակորեն բխում է արբիտրաժի էությունից, դրա վերաբերյալ միջազգային չափանիշներից, ուղղված է արբիտրաժի անկախության երաշխավորմանը և կարող է ուղենշային լինել դատական պրակտիկայի ձևավորման համար։

Նույն կերպ՝ մեկ այլ քաղաքացիական գործով դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ վերջինս չի կարող անդրադառնալ դիմումատուի կողմից վկայակոչված այն հիմքերին, որոնք վերաբերում են վեճի ըստ էության քննությանը[6]։

[5] Տե՛ս ԵԴ2/11068/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը։
[6] Տե՛ս ԵԴ2/29460/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը։

Ի տարբերություն վերոնշյալ որոշումներով արտահայտված դիրքորոշումների՝ հարկ է առանձնացնել հետևյալ դիրքորոշումը. *«(...) Արբիտրաժը, իր տիրապետության ներքո ունենալով նշված ապացույցները և հենց Դիմողի կողմից Ծառայության մատուցած լինելու փաստի վիճարկված չլինելու հանգամանքը, կարող էր և եկել է հայցադիմումով ներկայացված հայցապահանջի հիմնավոր լինելու եզրահանգմանը՝ հիմնվելով ներկայացված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման վրա»*[7]: Մեջբերված դիրքորոշումը խնդրահարույց է արբիտրաժի անկախության և կողմերի ինքնավարության սկզբունքների համատեքստում: Ըստ էության, դատարանը սույն դեպքում հանդես է եկել որպես վերաքննություն իրականացնող ատյան և գնահատել է արբիտրաժային տրիբունալի կողմից իր տիրապետության ներքո գտնվող ապացույցների հետազոտման ու գնահատման կարգը, ինչպես նաև դրա արդյունքում կատարված եզրահանգումները:

Ստորև կանդրադառնանք արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման հիմքերի վերաբերյալ առկա դատական պրակտիկային՝ ըստ Օրենքով նախատեսված չեղյալ ճանաչման հիմքերի:

**ա) Արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է:**

ՀՀ-ում արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման ամենահաճախ վկայակոչվող և կիրառվող հիմքը արբիտրաժային համաձայնության անվավերությունն է:

Դատական գործերի մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման այս հիմքը հիմնականում կիրառվում է, երբ Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված արբիտրաժային համաձայնության գրավոր ձևը պահպանված չէ, այդ թվում՝ համաձայնության ներքո ստորագրությունը բացակայում է, արբիտրաժային վարույթի մասնակցի կողմից չի ստորագրվել կամ ակնհայտ չէ վերջինիս կամքը:

Այնուամենայնիվ, դատական գործերի մշտադիտարկման ընթացքում ի հայտ են եկել ընդհանուր պրակտիկայից շեղվող մոտեցումներ և այս հիմքի տարամեկնաբանման պրակտիկա:

Այդպիսի օրինակներից են Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված արբիտրաժային համաձայնության գրավոր ձևի պահպանման պահանջի առնչությամբ տարբերվող մեկնաբանությունները:

Այսպես, առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, քննության առնելով արբիտրաժային համաձայնության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը, արտահայտել է հետևյալ

[7] Տե՛ս ԵԴ2/10934/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը:

դիրքորոշումը. *«(...) էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններին բաժանորդագրվելու դիմումում կատարված հղումը (...) ընկերության կողմից բաժանորդներին մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն՝ պայմանագիրը/դիմումը կնքված է գրավոր ձևով և տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս։»*[8]: Մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը նույնպես միանալու պայմանագրի ընդհանուր պայմաններում կատարված արբիտրաժային վերապահումը համարել է պատշաճ գրավոր ձևով կնքված արբիտրաժային համաձայնություն[9]: Հակառակ այս մոտեցմանը, արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման վարույթների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է նաև այն մոտեցումը, որ միանալու պայմանագրերում առկա արբիտրաժային վերապահումը չի կարող համարվել Օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ձևակերպված, քանի որ սպառողը չի տվել իր անվերապահ համաձայնությունը։

Դատական պրակտիկայում հակասական մեկնաբանություններ են տրվել նաև, այսպես կոչված, «արբիտրաժային ծանուցում-առաջարկ»-ների՝ արբիտրաժային համաձայնություն հանդիսանալու հարցի հետ կապված։

Այսպես, մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրված քաղաքացիական գործով դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ չնայած «ծանուցում-առաջարկը» ուղարկվել է պատասխանողի էլ. փոստի հասցեին՝ այն չի համարվում պատշաճ ստացված, քանի որ չկա որևէ ապացույց այն ստացած կամ ընթերցված լինելու վերաբերյալ։ Բացի այդ, դատարանը ապացույցների շարքից հանել է «ծանուցում-առաջարկը»՝ օտարալեզու լինելու հիմքով[10]։

Նմանատիպ մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը գտել է. «*(...)սույն գործով առկա չէ որևէ արբիտրաժային համաձայնություն, քանի որ պատասխանողի կողմից նման համաձայնություն կնքելու կամ ընդունելու վերաբերյալ առկա չէ որևէ ապացույց։ Ավելին, արբիտրաժային որոշմամբ հղում է արվել արբիտրաժային վերապահման, որը կարող էր կնքվել միայն գրավոր պայմանագրով և պարունակեր արբիտրաժային վերապահում։ Արբիտրաժային առաջարկություն ուղարկելը բավարար չէ արբիտրաժային համաձայնությունը կնքված համարելու համար, քանի որ արբիտրաժային համաձայնությունը կնքված համարելու համար անհրաժեշտ է, որ մյուս կողմն ընդունի այն և հստակ առկա լինի մյուս կողմի կամքը առաջարկությունն ընդունելու համար։»*[11]: Սույն գործով դատարանի արտահայտած դիրքորոշումը համադրելով այլ գործերով արտահայտված դիրքորոշումների հետ՝ կարող ենք եզրահանգել, որ դատարանները հաճախ արբիտրաժային համաձայնությունը համարում են Օրենքի 7-րդ հոդվածի

[8] Տե՛ս ԵԴ2/4148/02/26 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի մայիսի 27-ի որոշումը։
[9] Տե՛ս ԵԴ2/3325/02/26 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի մայիսի 20-ի որոշումը։
[10] Տե՛ս ԵԴ2/11068/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը։ Սույն գործով, ամենայն հավանականությամբ, հայերեն տեքստը շարադրված է եղել լատինատառ։
[11] Տե՛ս ԵԴ/55127/02/22 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի հունվարի 30-ի որոշումը։

պահանջներին համապատասխանող բացառապես այն դեպքերում, երբ այն կնքված է երկկողմ ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու եղանակով։

Արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման քննարկվող հիմքում ընկած փաստական հանգամանքները դատական պրակտիկայում երբեմն գնահատվում են որպես Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմք։ Մասնավորապես, այն դեպքում, երբ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող երկու տարբեր գործերով նույն արբիտրաժային տրիբունալը քննել և արբիտրաժային վճիռներ է կայացրել միևնույն քրեական գործով անցնող մեղադրյալների կողմից այլ անձանց անունից կնքված պայմանագրերում առկա արբիտրաժային վերապահումների հիման վրա, դատարանը մի գործով արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչել արբիտրաժային համաձայնության անվավերության հիմքով՝ հիմքում դնելով արբիտրաժային համաձայնությունը պատասխանողի ստորագրությունը չպարունակելու հանգամանքը[12], իսկ մեկ այլ գործով՝ վճիռը չեղյալ է ճանաչել արբիտրաժային համաձայնության բացակայության հիմքով՝ հիմքում դնելով այն, որ ողջ արբիտրաժային գործում բացակայում է կողմերի միջև օրենքով թույլատրելի որևէ եղանակով կնքված արբիտրաժային համաձայնություն[13]։

Ամփոփելով կարող ենք նշել, որ թեև նշված հիմքը վերաբերում է արբիտրաժային համաձայնության անվավերությանը և չի պարունակում դրույթներ արբիտրաժային համաձայնության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին, մշտադիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ արբիտրաժային համաձայնության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռները չեղյալ են ճանաչվում և՛ այս հիմքով, և՛ վեճն արբիտրաժին ենթակա չլինելու հիմքով։

Մեր գնահատմամբ՝ արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել դատարանի կողմից Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով, եթե վեճը ՀՀ օրենսդրության համաձայն արբիտրաժային կարգով լուծման ենթակա չէ։ Հատկանշական է, որ ո՛չ Կոնվենցիան, ո՛չ էլ Մոդելային օրենքը չեն նախատեսել արբիտրաժային համաձայնության բացակայությունը որպես արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու առանձին հիմք, քանի որ առանց նման համաձայնության արբիտրաժային վարույթ պարզապես չի կարող նախաձեռնվել և արբիտրաժային վճիռ կայացվել։ Այդուհանդերձ, քանի որ ՀՀ արբիտրաժային պրակտիկայում հանդիպում են նման դեպքեր, արբիտրաժային համաձայնության բացակայության դեպքում դատարանը պետք է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչի Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով՝ նկատի ունենալով, որ չի պահպանվել արբիտրաժային համաձայնության գրավոր ձևը։

Արբիտրաժային համաձայնությունների անվավերության հետ կապված դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատարանները, արբիտրաժային

[12] Տե՛ս ԵԴ2/3511/02/26 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի հունիսի 5-ի որոշումը։
[13] Տե՛ս ԵԴ2/3492/02/26 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի հունիսի 22-ի որոշումը։

համաձայնությունը համարելով պաթոլոգիական, չեղյալ են ճանաչել դրա հիմքով կայացված արբիտրաժային վճիռները: Այսպես, քաղաքացիական գործերից մեկով դատարանը նշել է. *«(...)Արբիտրաժային պրակտիկայում գոյություն ունեն, այսպես կոչված, պաթոլոգիկ արբիտրաժային համաձայնություններ:*

*Նման համաձայնությունների խնդրին մանրամասն կերպով անդրադարձ է կատարել Գարի Բորնը իր «Միջազգային առևտրային արբիտրաժ» գրքում, որից հատվածներ կմեջբերվեն ստորև: Պաթոլոգիկ արբիտրաժային համաձայնությունները դրանք այն արբիտրաժային համաձայնություններն են, որոնք ա) չեն կարգավորում էական պայմանները, բ) անորոշ են, գ) հղում են կատարում գոյություն չունեցող արբիտրաժային հաստատությունների, դ) հակասական են, ե) այլընտրանքային համաձայնություններ են: Այսպես, էական պայմանները չկարգավորող արբիտրաժային համաձայնությունների թվին են դասվում նրանք, որոնք չեն մատնանշում կոնկրետ արբիտրաժային հաստատության անվանումը, որը պետք է քննի հնարավոր վեճը: Սակայն, միջազգային պրակտիկան, ինչպես նաև գրեթե բոլոր հեղինակավոր արբիտրաժային հաստատությունները որդեգրել են այն մոտեցումը, որ արբիտրաժային հաստատության անվանման վերաբերյալ նշման բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ և բավարար չէ արբիտրաժային համաձայնության անվավերության համար: Եթե վեճի լուծումը արբիտրաժին հանձնելը եղել է կողմերի միակ կամ դոմինանտ մտադրությունը, ապա անորոշությունները, վրիպակները, մանրամասները, որոնք վերաբերում են արբիտրաժային վարույթի ընթացակարգին, ներառյալ արբիտրաժային հաստատության անվանումը, չեն կարող էական դեր խաղալ:»:*

*Արբիտրաժային համաձայնության ոչ ամբողջական, անորոշ կամ հակասական պայմանները չեն կարող արբիտրաժային համաձայնությունը դարձնել պաթոլոգիկ: Քանի դեռ դրանք չեն վերաբերում պարտադիր պայմանների, այն է՝ կողմերի կամքը վեճի լուծումը հանձնել արբիտրաժին, դրանք չեն հանգեցնում արբիտրաժային համաձայնության անվավերության: Փոխարենը, անհրաժեշտ է գտնել լուծում մեկնաբանելու կամ լրացնելու նման արբիտրաժային համաձայնությունը՝ հղում կատարելով ընդհանուր պայմանագրային իրավունքին, որը հարգում է կողմերի կամքը վեճի լուծումը հանձնելու արբիտրաժային դատարանին:»*[14]:

Նշված մեկնաբանությունների լույսի ներքո դատարանը «Հայցվորի ընտրությամբ երկրի արբիտրաժում» ձևակերպմամբ արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու հիմքով չեղյալ է ճանաչել արբիտրաժային վճիռը: Դատարանն արձանագրել է, որ կողմերի միջև կնքված պայմանագրում նշված «տարաձայնությունները քննության են առնվում երկրի արբիտրաժում հայցվորի ընտրությամբ» ձևակերպումը անորոշ է և հնարավորություն չի տալիս հանգելու միանշանակ եզրակացության առ այն, որ կողմերի իրական կամահայտնությունն ուղղված է եղել պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումն իրականացնել բացառապես արբիտրաժի միջոցով:

[14] Տե՛ս ԵԴ2/29460/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը:

Արբիտրաժային համաձայնությունների անվավերության հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վարույթների մշտադիտարկման ընթացքում հայտնաբերվել է մոտեցում, որը, մեր կարծիքով, խաթարում է արբիտրաժի էությունը: Այսպես, նույն դիմումատուի մասնակցությամբ երկու քաղաքացիական գործերով դատարանը արտահայտել է այն դիրքորոշումը, որ արբիտրաժային համաձայնության անվավերությունը պետք է հաստատվի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ուստի դատարանը չի կարող արբիտրաժային համաձայնության անվավերության հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչել[15]: Առաջին ատյանի դատարանը նմանատիպ այլ գործով կրկնել է այն դիրքորոշումը, որ գործարքի, այդ թվում՝ արբիտրաժային համաձայնության անվավերությունը պետք է հաստատվի առանձին օրինական ուժի մեջ մտած վճռով[16]:

Ըստ էության, վերոնշյալ դեպքերում դատարանները նույնացրել են արբիտրաժային համաձայնությունը քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև կնքվող պայմանագրերի հետ: Այս գործերով տրված մեկնաբանությունից բխում է, որ դատարանները այս հիմքով սահմանված դեպքերում անվավերությունը հիմնավորելու պարտականությունը ոչ միայն դրել են դիմումատուների վրա, այլ նաև պահանջել լրացուցիչ ապացույց՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, որով կհիմնավորվեր արբիտրաժային համաձայնության անվավերությունը, որն էլ հիմք կհանդիսանար արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու համար:

Վերոնշյալ մոտեցումը խնդրահարույց է արբիտրաժային տրիբունալի իրավասության և արբիտրաժային վճռի դատական վերահսկողության օրենսդրական կառուցակարգի տեսանկյունից: Արբիտրաժային համաձայնության անվավերության հիմքով վճիռը չեղյալ ճանաչելու համար առանձին դատական ակտի պարտադիր առկայության պահանջը չի բխում Կոնվենցիայի դրույթներից և անհարկի սահմանափակում է կողմի իրավունքները:

Ավելին, Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված է նաև, որ արբիտրաժային տրիբունալը իրավասու է, իսկ արբիտրաժային համաձայնությունը վիճարկելու դեպքում՝ պարտավոր է առաջնահերթ քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այստեղ կա երկու ընթացք՝ արբիտրաժային համաձայնության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը բողոքարկելու կապակցությամբ:

Առաջին՝ եթե արբիտրաժային տրիբունալը իր իրավասության վերաբերյալ, որպես նախնական բնույթ ունեցող հարցի, կայացնում է որոշում, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշման մասին տեղեկացում ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հարցով: Այդ դիմումի քննության դատավարական կանոնները սահմանված են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխով:

[15] Տե՛ս ԵԴ2/25351/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը և ԵԴ2/25602/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը:
[16] Տե՛ս ԵԴ/52031/02/22 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի մարտի 15-ի որոշումը:

Երկրորդ՝ եթե արբիտրաժային տրիբունալը չի անդրադառնում արբիտրաժային համաձայնության առկայությանը կամ վավերականությանը, կամ վճռով է գտնում, որ իրավասու է արբիտրաժային գործը քննել, ապա արբիտրաժային համաձայնության առկայությունը կամ վավերականությունը վիճարկող կողմի իրավունքների պաշտպանության միջոցն է արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմում ներկայացնելը՝ վերոնշյալ հիմքով, որի քննության դատավարական կանոնները սահմանված են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ գլխով։

Այսինքն, Մոդելային օրենքից բխող և օրենսդրի կողմից սահմանված նորմերի մեկնաբանության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ արբիտրաժային համաձայնության վավերականության կամ առկայության վերաբերյալ առաջին գնահատական տվողը արբիտրաժային տրիբունալն է։ Արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված որոշման հետ անհամաձայնության պարագայում գործում են երկու ընթացակարգեր, որոնք ուղղված են արբիտրաժային տրիբունալի իրավասությանը դատական գնահատական ստանալուն։ Վերոնշյալ ընթացակարգերից ոչ մեկը չի ենթադրում, որ արբիտրաժային վճիռը արբիտրաժային համաձայնության անվավերության հիմքով չեղյալ ճանաչելու համար անհրաժեշտ է ընդհանուր հայցային վարույթի կարգով այդ համաձայնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած առանձին վճիռ։

Ասվածը չի սահմանափակում կողմի իրավունքը՝ մինչև արբիտրաժային վարույթի սկիզբը ընդհանուր հայցային վարույթի կարգով արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու պահանջով հայց ներկայացնելու դատարան։ Ավելին, վերջին տարիների պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եղել են արբիտրաժային համաձայնությունն անվավեր ճանաչելու պահանջներով հարուցված հայցեր[17]։

### բ) Կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից.

Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման գործերի մշտադիտարկման ընթացքում վերոնշյալ հիմքը ևս հաճախ է հանդիպում, և կան բազմաթիվ դիմումներ, որոնց քննության արդյունքում արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվել արբիտրաժի մասին պատշաճ ծանուցված չլինելու, ինչպես նաև այլ պատճառներով կողմի՝ իր գործը ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու հիմքերով։ Միևնույն ժամանակ, արբիտրի նշանակման վերաբերյալ պատշաճ ձևով տեղեկացված չլինելու հիմքով չեղյալ ճանաչված արբիտրաժային վճիռներ հազվադեպ են հանդիպում։

[17] Տե՛ս ԵԴ2/4382/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի ապրիլի 30-ի որոշումը և ԵԴ2/10129/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի մարտի 9-ի որոշումը։

Ընդհանուր առմամբ, դատարանները ցուցաբերում են Կոնվենցիայի մեկնաբանություններից բխող մոտեցում այս հիմքով արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու կապակցությամբ։

Դատարանը, քաղաքացիական գործի շրջանակներում անդրադառնալով արբիտրաժային վարույթի մասնակիցների պատշաճ ծանուցման հարցին, մեկնաբանելով Օրենքի 3-րդ հոդվածի կարգավորումները, հայտնել է այն դիրքորոշումը, որ պայմանագրում նշված հասցեին գրավոր հաղորդակցություն հասցնելու փորձն արդեն իսկ բավարար է կողմին ուղարկված ծանուցումը կատարված համարելու համար[18]։

Նույն կերպ՝ մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը, մեկնաբանելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասն ու 19-րդ հոդվածը՝ արբիտրի կողմից այդ մասով նախատեսված բոլոր գործողությունների իրականացման պայմաններում պատասխանողին համարել է պատշաճ ծանուցված։ Դատարանը այս գործով հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը. *«(...)ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընթացակարգային կանոններն արբիտրաժային վարույթում կիրառելու հարցում ևս պետք է ղեկավարվել «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով, այսինքն՝ ընտրել այն կանոնները, որոնց մասով Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չունի իր կարգավորումը։ Նման եզրահանգումը Դատարանը պայմանավորում է ոչ միայն նրանով, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում օրենսդիրը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին, օգտագործում է «համապատասխան ընթացակարգային կանոնները» բառերը, այսինքն՝ ուղիղ նշում է, որ խոսքը չի գնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր ընթացակարգային կանոնների մասին, այլ նաև նրանով, որ կողմերը, իրենց կամքով հրաժարվելով ընդհանուր իրավասության դատարանին իրենց վեճը հանձնելու իրավունքից և իրենց միջև ծագած վեճի լուծումն արբիտրաժային տրիբունալին վերապահելով, ըստ էության, ինքնակամ հրաժարվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի ընթացակարգերից՝ նախապատվություն տալով արբիտրաժի նպատակներին և սկզբունքներին համահունչ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի դրույթներից բխող ընթացակարգերին։»*[19]։

Օրենքի 3-րդ հոդվածի տրամաբանությամբ դատարանը, մեկ այլ քաղաքացիական գործով անդրադառնալով դիմումատուի այն պնդմանը, որ «*azdarar.am*» հրապարակային ծանուցումների ինտերնետային հարթակի միջոցով ծանուցում չի իրականացվել, ուստի արբիտրաժային վճիռը ենթակա է չեղյալ ճանաչման, գտել է, որ նախ՝ Օրենքի 3-րդ հոդվածով և տվյալ գործով արբիտրաժային հաստատության արբիտրաժային կանոններով նման կարգավորում նախատեսված չէ, և երկրորդ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով ծանուցման եղանակի ընտրությունը

[18] Տե՛ս ԵԴ2/3325/02/26 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի մայիսի 20-ի որոշումը։
[19] Տե՛ս ԵԴ2/44503/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2024 թվականի մարտի 6-ի որոշումը։

կիակասի օրենքով և արբիտրաժային կանոններով նախատեսված արբիտրաժային վարույթի գաղտնիության սկզբունքին[20]:

Այնուամենայնիվ, հայտնաբերվել են որոշ տարբերվող մոտեցումներ կիրառվող ծանուցման կարգի վերաբերյալ: Այսպես, դատարանը, քննելով արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումը, գտել է, որ, ըստ էության, արբիտրաժային տրիբունալը չի իրականացրել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանված ծանուցման վերաբերյալ իր պարտականությունները՝ զրկելով դիմողին մրցակցային դատավարության սկզբունքներին համապատասխան իր գործը հավասար պայմաններում ներկայացնելու հնարավորությունից[21]: Սույն դեպքում, դատարանը, կարծես թե, արբիտրաժային տրիբունալին նույնացրել է դատարանի հետ՝ վերջինիս վրա դնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության» մասին կոնվենցիայի և Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքն ապահովելու, այդ թվում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցումներ իրականացնելու պարտականություն:

Դատարանները քննարկվող հիմքի համատեքստում անդրադարձել են նաև առանց արբիտրաժ իրականացնելու պահանջի պատասխանի դիտարկման արբիտրաժային վճիռ կայացնելու դեպքերին: Մասնավորապես, ԵԴ2/0936/02/24 քաղաքացիական գործով Դատարանն արձանագրել է, որ դիմողը արբիտրաժային պահանջը ստացել է 20.11.2023 թվականին, իսկ իր պատասխանը փոստային ծառայությանն է հանձնել 25.11.2023 թվականին՝ պահպանելով պատասխան ներկայացնելու 5-օրյա ժամկետը: Փոստային առաքանին արբիտրաժային տրիբունալը ստացել է 29.11.2023 թվականին, մինչ այդ՝ 27.11.2023 թվականին արդեն արբիտրաժային վճիռ էր կայացրել: Դատարանը, մեկնաբանելով վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան, հայտնել է, որ *«(...)դատավարական ընթացակարգերի պահպանված լինելը չպետք է և չի կարող սահմանափակել ու ի չիք դարձնել անձի՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:(...)»*[22]: Դատարանը սույն գործով արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչել պատասխանողի՝ իր գործը ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու հիմքով:

Ամփոփելով արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման այս հիմքի վերլուծությունը՝ գտնում ենք, որ վերոնշյալ դատական մեկնաբանությունները ընդհանուր առմամբ բխում են Կոնվենցիայի և Օրենքի պահանջներից, մասնավորապես՝ արբիտրաժային վարույթի մասնակիցները պետք է պատշաճ կերպով ծանուցված լինեն արբիտրաժային վարույթի և արբիտրի նշանակման մասին, ինչպես նաև ունենան իրենց գործը արբիտրաժային տրիբունալի առջև ներկայացնելու հնարավորություն: Ամեն պարագայում պետք է նկատի ունենալ, որ արբիտրաժային վարույթով ծանուցման կարգը չպետք է նույնացվի Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ծանուցման կարգին՝ հաշվի առնելով, որ արբիտրաժային վարույթի կողմերը արբիտրաժային համաձայնությամբ ձեռք

[20] Տե՛ս ԵԴ2/10281/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի փետրվարի 17-ի որոշումը:
[21] Տե՛ս ԵԴ/64757/02/22 քաղաքացիական գործով դատարանի 2024 թվականի հունվարի 8-ի որոշումը:
[22] Տե՛ս ԵԴ2/0936/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2024 թվականի ապրիլի 12-ի որոշումը:

են բերում ծանուցման եղանակի կամ այն կանոնների մասին համաձայնություն, որով պետք է իրականացվի ծանուցումը: Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև, որ արբիտրաժային վարույթը գաղտնի է, և կողմերի միջև հակառակի մասին համաձայնության բացակայության պարագայում հրապարակային ծանուցումներ, որպես կանոն, չեն կարող իրականացվել:

**գ) Վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր:**

Վերոշարադրյալ նորմի վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման այս հիմքը բաժանվում է երեք առանձին, ինքնուրույն ենթահիմքերի.

1) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ,

2) վճիռը չի համապատասխանում արբիտրաժային համաձայնության պայմաններին,

3) վճռով որոշվում են այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից: Պետք է նկատի ունենալ, որ այս ենթահիմքի առկայության դեպքում արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել այն մասով, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, և միայն այն դեպքում, երբ այդ մասը կարող է առանձնացվել վճռից:

Դատական պրակտիկայում շատ հազվադեպ են այս հիմքով վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումները, իսկ առկա դիմումների մեծամասնությունը մերժվում է՝ հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:

Դատական գործերից մեկով դատարանը չեղյալ է ճանաչել միջանկյալ արբիտրաժային վճիռը այն հիմնավորմամբ, որ խիստ անորոշ արբիտրաժային համաձայնության պայմաններում հստակ չէ, որ կողմերի իրական կամահայտնությունն ուղղված է եղել պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումն իրականացնել բացառապես արբիտրաժի միջոցով, սույն դեպքում՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջանկյալ արբիտրաժային վճիռ է կայացվել այնպիսի հարցի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ[23]:

[23] Տե՛ս ԵԴ/10040/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2023 թվականի մայիսի 3-ի որոշումը:

Վերոնշյալ դատական գործը եզակի է այն առումով, որ դատարանը առաջին անգամ Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված հիմքով չեղյալ է ճանաչել միջանկյալ արբիտրաժային վճիռ[24]:

**դ) Արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում սույն օրենքի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել սույն օրենքին:**

Այս հիմքի վերլուծության արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ արբիտրաժային վճիռը ենթակա է չեղյալ ճանաչման, երբ արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը՝

1) չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, պայմանով, որ այդ համաձայնությունը չհակասի Օրենքի պարտադիր դրույթներին, կամ

2) արբիտրաժային համաձայնության մեջ արբիտրաժային տրիբունալի կազմին կամ ընթացակարգին առաջադրվող պայմանների բացակայության պայմաններում՝ չի համապատասխանել Օրենքին:

Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման այս հիմքի կիրառության և մեկնաբանության մասով պետք է նշել, որ այս հարցերը կարող են բարձրացվել արբիտրաժային վարույթի ընթացքում: Այն պարագայում, երբ արբիտրաժային վարույթի ընթացքում կողմը արբիտրաժային տրիբունալին բացարկ չի ներկայացնում, արբիտրաժային տրիբունալի կազմի ձևավորման կամ այլ ընթացակարգի վերաբերյալ չի առարկում՝ այն պետք է մեկնաբանվի որպես առարկելու իրավունքից հրաժարում և այլևս տրամաբանորեն չպետք է կարողանա արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման փուլում վկայակոչել այս հիմքը:

Մեկ այլ հարց է ընթացակարգի պահպանված չլինելու հիմքով չեղյալ ճանաչման հիմքի մեկնաբանության և կիրառման հետագա զարգացումը: Խնդիրն այն է, թե ընթացակարգի խախտումը ինչպիսի՞ հետևանքներ պետք է առաջացնի, որպեսզի այս հիմքով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչվի: Մեր կարծիքով դատարանները պետք է առաջնորդվեն *de minimis* սկզբունքով այն մասով, որ ցանկացած ընթացակարգի խախտում չէ, որ պետք է հանգեցնի արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման, մանավանդ այն դեպքերում, երբ հնարավոր է այդ մասին արբիտրաժային տրիբունալին հայտնել վարույթի ընթացքում[25]:

[24] Մշտադիտարկման ընթացքում ի հայտ է եկել նաև մեկ այլ գործ, որտեղ հայցվում էր միջանկյալ վճռի չեղյալ ճանաչում, որը չի բավարարվել: Տե՛ս ԵԴ2/8457/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը:

[25] Տե՛ս Առևտրային արբիտրաժի միջազգային խորհուրդ, Նյու Յորքի 1958թ. կոնվենցիայի մեկնաբանման ԱԱՄԽ (ICCA)-ի ուղեցույց, ձեռնարկ դատավորների համար, երկրորդ խմբագրություն, հրապարակված է Առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի կողմից, 2024թ., էջ 141:

### ե) Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից:

Վերոնշյալը մեր կողմից քննարկված արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման երկրորդ խմբի մեջ ներառվող հիմքերից առաջինն է: Այս հիմքի կիրառման որոշ առանձնահատկություններին արդեն անդրադարձել ենք սույն հետազոտության «ա» ենթամասում: Սույն ենթամասում առանձնացվել են այս հիմքի կիրառման առնչությամբ որոշ քաղաքացիական գործեր:

Այսպես, ԵԴ2/12083/02/25 քաղաքացիական գործով դատարանը արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչել վեճը արբիտրաժին օրենսդրությամբ ենթակա չլինելու հիմքով: Դատարանի նման եզրահանգման համար հիմք են հանդիսացել այն հանգամանքները, որ արբիտրաժը արբիտրաժային վարույթի կողմի դիմումով պարտավոր էր հետաձգել արբիտրաժային գործի քննությունը, արբիտրաժը չի ունեցել գործի վարույթը հետաձգելու միջնորդությունը մերժելու արբիտրաժային կանոններով նախատեսված իրավասություն, արբիտրաժը միջնորդությունը մերժելիս սխալ է մեկնաբանել օրենքը, արբիտրաժը միջնորդությունը մերժելիս չի կիրառել ՀՀ իրավունքը՝ մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածը[26]:

Մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը չեղյալ է ճանաչել արբիտրաժային վճիռը՝ վեճի առարկան արբիտրաժի քննությանը ենթակա չլինելու հիմքով այն հիմնավորմամբ, որ արբիտրաժային վճռի կայացումից առաջ կողմերի միջև նույն փաստական հանգամանքներով և նույն առարկայի վերաբերյալ առկա է ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ[27]:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է առանձնահատուկ մեկնաբանություն, որտեղ դատարանը արբիտրաժային վճիռը մասնակի չեղյալ է ճանաչել՝ այն մասով, որն առնչվել է արբիտրաժային վարույթով պատասխանող հանդիսացած անձին, ով ճանաչվել էր սնանկ[28]: Չնայած այն հանգամանքին, որ որոշմամբ հստակ չէ, թե ո՞ր հիմքով է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչվել, սակայն կարող ենք եզրակացնել, որ չեղյալ ճանաչման հիմք է հանդիսացել Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետը, այն է՝ վեճի առարկան ենթակա չէր արբիտրաժի լուծմանը:

### զ) Վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ առկա չէ «հանրային կարգի» միասնական բնորոշում: Այնուամենայնիվ, ստորև կանդրադառնանք այս հիմքի կիրառման որոշ դատական մեկնաբանությունների:

Նախևառաջ հարկ է վկայակոչել Վճռաբեկ դատարանի կողմից վարչական գործով բացահայտված «իրավակարգի հիմունքներ» կամ «հանրային կարգ» հասկացությունը: Այդ

[26] Տե՛ս ԵԴ2/12083/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը:
[27] Տե՛ս ԵԴ2/11068/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը:
[28] Տե՛ս ԵԴ/47893/02/21 քաղաքացիական գործով դատարանի 2022 թվականի հունիսի 13-ի որոշումը:

որոշմամբ Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալը. *«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1258-րդ հոդվածի 1-ին կետում «իրավակարգի հիմունքներ» (հանրային կարգ) հասկացության բովանդակությունը հանգում է հետևյալին. իրավակարգի հիմունքները (հանրային կարգը) ներառում են այն իրավական հիմնարար սկզբունքները, որոնք ունեն համընդհանրություն, հասարակական առանձնահատուկ նշանակություն, ընկած են պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգերի հիմքում: Նման սկզբունքներ են հանդիսանում, մասնավորապես, պայմանագրի ազատության, իրավահարաբերության մասնակիցների հավասարության և նրանց բարեխղճության, իրավախախտմանը համահունչ քաղաքացիական պատասխանատվության, խախտված իրավունքների վերականգնման և խախտված իրավունքների դատական պաշտպանության սկզբունքները:»*[29]:

Արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումների քննության ընթացքում դատարանը մի քանի անգամ անդրադարձել է «հանրային կարգ» հասկացությանը: Այսպես.

Քաղաքացիական գործով դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«Անդրադառնալով «հանրային կարգ» (իրավակարգի հիմունքներ) հասկացության բովանդակությանը՝ Դատարանն արձանագրում է, որ այն ըստ էության ներառում է այն իրավական հիմնարար սկզբունքները, որոնք ունեն համընդհանրություն, հասարակական առանձնահատուկ նշանակություն, ընկած են պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգերի հիմքում: Դատարանի գնահատմամբ իրավակարգի հիմունքներին հակասության դեպքում ենթադրվում է դրա կիրառման արգելակում որպես հատուկ իրավական «պաշտպանական վահան», որի դեպքում հարկ է գնահատել առկա է հանրային կարգի (դրա մաս հանդիսացող դրույթների խախտում), թե ոչ, իսկ դա նաև պետք է լինի ակնհայտ: Նշվածը նշանակում է, որ ցանկացած անհամապատասխանություն չէ, որ կարող է հիմք հանդիսանալ խոսելու հանրային կարգին հակասելու մասին, այլ պայմանական արբիտրաժի վճռի դեպքում դրա հետևանքները պետք է կոպտորեն ոտնահարեն ՀՀ սահմանադրական արժեքներն ու արդարադատության հիմնական սկզբունքները:*

*Ինչպիսի պայմաններում Դատարանը գալիս է այն հետևության, որ բոլոր այն դեպքերում, երբ դիտարկվում է, որ արբիտրաժի վճիռը ակնհայտ հակասում է պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգի կառուցման հիմքը կազմող հիմնարար սկզբունքներին կամ կարող է ունենալ հետևանքներ պետության ինքնիշխանությանը կամ անվտանգությանը վնաս հասցնելու ձևով, շոշափել սոցիալական մեծ խմբերի շահերը կամ խախտել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքները և ազատությունները, ապա նման դեպքում նոր կարող է խոսք գնալ Հայաստանի Հանրապետության իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին) հակասելու, ըստ այդմ՝ նման վճիռը չեղյալ ճանաչելու մասին:*

[29] Տե՛ս ՎԴ/3882/05/22 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

*Դատարանի գնահատմամբ արբիտրաժի վճռի՝ Հայաստանի Հանրապետության հանրային կարգին հակասելու հարցի պարզման դեպքում, չպետք է առավել լայն մեկնաբանություն տալ «հանրային կարգ» եզրույթին քան այն, ինչն ըստ էության բնորոշվել է վերը:»*[30]:

Մեկ այլ գործով դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«Անդրադառնալով Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի կիրառմամբ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու պահանջին, Դատարանն արձանագրում է, որ արբիտրաժային վճռի՝ ՀՀ հանրային կարգին հակասելու հիմքերով վճռի վիճարկման դեպքերը, ի թիվս այլնի, իրենց մեջ կարող են ներառել այն իրավիճակները, երբ արբիտրաժային դատարանն իր վճռով կողմերի համար սահմանել է ՀՀ ներպետական օրենսդրությանը հակասող գործողություններ կատարելու պահանջ:»*[31]:

Մեկ այլ գործով հաստատվել է այն հանգամանքը, որ արբիտրաժային հաստատության միջոցով իրականացվող արբիտրաժային վարույթով տրիբունալը կայացրել է երկու վճիռներ. առաջին վճիռը կայացվել է վարույթ ընդունելուց չորս աշխատանքային օր հետո, իսկ երկրորդը՝ վարույթ ընդունելուց շուրջ երեք ամիս անց: Դատարանը այս գործով գտել է. *«(...)դիմողի կողմից ներկայացված թվով երկու վճիռները նույնական են ձևական և բովանդակային (որպես գործը լուծող ակտ) առումով, որն իր հերթին անհիմն է դարձնում արբիտրաժային տրիբունալի ներկայացված պարզաբանումն առ այն, որ 09.04.2025թ.-ին կայացված փաստաթուղթը հանդիսացել է ոչ թե վճիռ, այլ վճռի նախագիծ, որը չեղարկվել է արբիտրաժային տրիբունալի կողմից՝ դրա համար չներկայացնելով բավարար և արժանահավատ ապացույցների համակցություն և ներկայացնելով գործընթաց (վճռի նախագծի չեղարկում)՝առանց դրա համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի վկայակոչման:»*[32]: Դատարանը վճիռը չեղյալ է ճանաչել ՀՀ հանրային կարգին հակասող լինելու հիմքով՝ նույն գործով երկու ըստ էության լուծող վճիռների առկայության հիմնավորմամբ (*res judicata*):

Մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը հանրային կարգին հակասելու հիմքով չեղյալ է ճանաչել արբիտրաժային վճիռը այն հիմնավորմամբ, որ «*վճիռը ստորագրված չէ, վճռի եզրափակիչ մասում առկա են արբիտրաժային տրիբունալի նախագահողի և երկու արբիտրների անվան դիմաց գրաֆիկական պատկերով (ֆաքսիմիլե) դրոշմակնիքներ:»*[33]:

Արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման գործերի մշտադիտարկման արդյունքում բացահայտվել է հետևյալ դիրքորոշումը, որը դեռևս հանրային կարգին տրված ամենալայն մեկնաբանությունն է: Մասնավորապես, դատարանը, հիմք ընդունելով ԱԱՄԽ-ի կողմից հանրային կարգին տրված մեկնաբանությունները, նշել է. «*(...)«հանրային կարգ»-ն իրենից ենթադրում է տվյալ պետության Սահմանադրությունում և օրենքներում ամրագրված հիմնական սկզբունքները: Արբիտրաժային դատարանի վճիռը կարող է ճանաչվել*

[30] Տե՛ս ԵԴ2/0537/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2026 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը:
[31] Տե՛ս ԵԴ2/44318/02/23 քաղաքացիական գործով դատարանի 2024 թվականի ապրիլի 15-ի որոշումը:
[32] Տե՛ս ԵԴ2/8248/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը:
[33] Տե՛ս ԵԴ2/3463/02/24 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի հունվարի 10-ի որոշումը:

*իրավունքի հիմնարար սկզբունքները խախտող այն դեպքում, եթե դրա կատարման արդյունքում կձեռնարկվեն գործողություններ, որոնք կամ անմիջականորեն արգելված են օրենքով, կամ պետության ինքնիշխանությանը կամ անվտանգությանը վնաս են հասցնում՝ շոշափելով սոցիալական մեծ խմբերի շահերը, ինչն անհամատեղելի է պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգի կառուցման սկզբունքների հետ, կամ խախտվում են մասնավոր անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև որոնք հակասում են քաղաքացիական օրենսդրության հիմնական սկզբունքներին, ինչպիսիք են մասնակիցների հավասարությունը, սեփականության անձեռնմխելիությունը, պայմանագրի ազատությունը: «Հանրային կարգ» հասկացության բովանդակությունը որպես իրավական հիմնարար սկզբունքներ, օժտված են բարձրագույն իմպերատիվությամբ, համընդհանրությամբ, հասարակական և հանրային առանձնահատուկ նշանակությամբ, կազմում են պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգի կառուցման հիմքը:*

*Նման պայմաններում պետք է նշել, որ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքը համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի կարող է համարվել անվավեր, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ, սակայն դա չի նշանակում, որ բոլոր այն դեպքերում, երբ գործարքը կամ դրա մասը կնքվել է օրենքի կամ այլ իրավական ակտերի խախտմամբ պետք է այն համարել հանրային կարգի խախտում:»*[34]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ ընդհանուր առմամբ դատարանի որոշումները համապատասխանում են Կոնվենցիայի և Մոդելային օրենքի տրամաբանությանը, չնայած նրան, որ առկա չէ միասնական հասկացություն: Ամեն դեպքում պետք է նշել, որ հանրային կարգի հասկացությունը չպետք է այնքան լայն մեկնաբանել, որ դրանում ներառվեն նյութական կամ ընթացակարգային նորմերի ցանկացած խախտումներ, որոնք հիմք կհանդիսանան արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու համար:

## 3. Եզրակացություն.

Ամփոփելով արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման դիմումներով դատական գործերի մշտադիտարկումը՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման վերաբերյալ ՀՀ դատական պրակտիկայում ընդհանուր առմամբ նկատվում է միջազգային չափանիշներին համահունչ մոտեցում, առանձին գործերով արձանագրվում են Օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու հիմքերի ոչ միատեսակ և երբեմն չափազանց լայն մեկնաբանություններ: Դրանք հատկապես դրսևորվում են արբիտրաժային համաձայնության վավերականության գնահատման, արբիտրաժային վարույթի ընթացակարգային պահանջների պահպանման, չեղյալ ճանաչման տարբեր հիմքերի սահմանազատման, ինչպես նաև հանրային կարգի հասկացության մեկնաբանման հարցերում: Նման մոտեցումները կարող են խաթարել

[34] Տե՛ս ԵԴ2/2121/02/25 քաղաքացիական գործով դատարանի 2025 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը:

արբիտրաժի անկախությունը և ստեղծել արբիտրաժային վճիռների ըստ էության վերանայման վտանգ: Նկարագրված խնդիրները հատկապես առարկայական են դառնում այն պայմաններում, երբ արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու վերաբերյալ որոշումները ՀՀ օրենսդրությամբ ենթակա չեն բողոքարկման: